Գյումրի համայնքի «Հենզել և Գրետել – մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի
տնօրենի 2025 թվականի սեպտեմբերի 9 N 71 Լ հրամանով

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Հենզել և Գրետել – մսուր մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության դաստիարակի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին

| N | Թափուր պաշտոնի անվանումը | Հավակնորդին ներկայացվող պահանջները (չափանիշները) | Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝ | Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը (նյութերը) |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1. | Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Հենզել և Գրետել– մսուր մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության<br><br>դաստիարակի<br><br>(0.5դրույք) | **1 ) Որակավորման պահանջները՝**<br>նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որկավորմամբ կամ միջին կամ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտում առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ..<br>**Ընդհանրական պահանջներ**<br>**նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի պաշտոն զբաղեցնողը պետք է՝**<br>1)տիրապետի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկայով աշխատելու հմտություններին.<br>2)իմանա ստորև նշված նորմատիվ իրավական ակտերի այն դրույթները, որոնք վերաբերվում են կրթության բնագավառին, կանոնակարգում են պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները՝<br><br>ա/ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, «Կրթության մասին», «Հանրակրթության մասին»,, «Նախադպրոցական կրթության մասին», <<Լեզվի մասին>>, «Երեխայի իրավունքների մասին», <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>>,<<Լիցենզավորման մասին>>օրենքները, Հայաստանի | Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, որը՝<br><br>1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.<br><br>2) դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից.<br><br>3) տառապում է ՀՀ կառավարության կողմից հաստատված այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության իրականացմանը.<br><br>4) դատապարտվել է հանցագործության համար, և | 1)դիմում (Ձև 1).<br><br>2)անձը հաստատող փաստաթուղթ.<br><br>3)կրթության մասին փաստաթուղթ.<br><br>4)աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).<br><br>5)ինքնակենսագրություն<br><br>6)մեկ լուսանկար՝3x4 չափի.<br><br>7)այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.<br><br>8) Հայաստանի Հանրապետության արական |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | <<Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը>>, Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը, կրթության պետական լիազորված մարմնի համապատասխան նորմատիվ իրավական ակտերը.<br><br>բ/ մանկավարժության, հոգեբանության, ֆիզոլոգայի, հիգիենայի, դաստիարակչական աշխատանքի տեսության և մեթոդիկայի հիմունքները. | սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար: | ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ<br><br>զինվորական կցագրման վկայական.<br><br>9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության<br><br>դեպքում):<br><br>**Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:** |
| **Մրցույթն անցկացնելու վայրը, օրը, ժամը** | | **Դիմումների և փաստաթղթերի ընդունումը** | | **Դիմումների և փաստաթղթերի ներկայացման ժամկետները** |
| **Վայրը՝ ք. Գյումրի, Վարդանանց հր. 1, Գյումրու համայնքապետարան 3–րդ հարկ, նիստերի դահլիճ**<br><br>**օրը՝ 2025 թվականի հոկտեմբերի**<br><br>**10-ին, ժամը՝ 14:30** | | **Փաստաթղթերը ներկայացնելու, լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմել Գյումրի համայնքի «Հենզել և Գրետել – մսուր մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (հեռ.077081083): Հարցաշարերը տեղադրված են ԿԳՄՍՆ կայքում (Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի «22» հոկտեմբերի 2024 թվական N1981 - Ա/2 հրաման):**<br><br>**Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր, ժամը 09:00 – 17:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:** | | **2025 թվականի հոկրեմբերի 6-ը ներառյալ:** |